

ունեցող դժբախտ հայ ժողովրդի կոտորածների փաստը, Պօլսի և այլ տեղերի խաղաղ հայ ազգաբնակչութեան դէմ գործած խժոժութիւններն ու ճնշումները, և ապա սպառնալով, հրապարակով պատասխանատուութեան են կոչում կատարուած ոճիրների համար Թիւրք կառավարութեան բոլոր անդամներին և տեղական ներկայացուցիչներին, որոնք մասնակից են եղել հայկական կոտորածներին:

Կէթ այս անգամ յուսանք, որ երեք հօր դաւենակից պէտքեանց այս ազգու զիմումը կը սթափեցնի արկածախնդիր Տաճիկ կառավարութեան, յանցաւորները կըստանան իրենց պատիժը, իսկ անմեղ հայ ժողովրդի թափած արիւնն էլ կըլինի վերջինը: Անշուշտ պէտք է իրականանայ Անգլիայի կառավարութեան կողմից նախարարապետ Ասկվիտի հոկտեմբերի 28-ին Հիլդ-Հոլլում Տաճկաստանի համար արտասանած հետեւեալ ճակատագրական խօսքերը. «Անգլիան սուրբ պատեանի մէջ չի դնի, մինչեւ որ չհնչուին քաղման զանգերը Տանկաստանի սիրապետութեան՝ ոչ միայն Եւրոպայում, այլ նոյն իսկ Տանկաստանի Ասիական երկրների մէջ, որովհետեւ Տանկական կառավարութիւնն ինքնասպանութիւն է գործել եւ սեպհական ձեռքերով փորել իւր գերեզմանը»: Այո, պէտք է վերջապէս Հայաստանում հնչուեն Տաճկաստանի տիրապետութեան թաղման զանգերը, որպէսզի միաժամանակ բազմաշարժար հայ ժողովրդի յուսալից խաղաղ կեանքի յարութեան զանգերը ղօղանջեն և ուրախութեան «Մեծ Աւետի»-ը տարածեն ամենուրեք:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՁԱՅՆԸ.

Ազգիս Վեհափառ Կաթողիկոսը մայիսի 13-ին Մանազկերտից (Բերդ) ստացել է տեղական առաջնորդական փոխանորդ Յովհաննէս քահանայ Տ. Աւետիսեանից 1915 թ. 7 մայիսի թուակիր զրոթիւնը, որով նկարագրում է Մա-

նազկերախի և շրջակայ տաճկահայերի կոտորածը և նոցա միանգամայն անտանելի կացութիւնը: Այստեղ բերում ենք այդ գրութիւնը՝ մեզնից անկախ պատճառներով՝ որոշ կրճատումներ անելով:

Վեհափառ Տէր,

Հայաստանի մէջ տեղի ունեցած աղէտալի դէպքերն ու արիւնոտ անցքերը անշուշտ հիմա իմացած կ'ըլլաք արիւնարբու Օսմանցիները արիւնով ողողեցին Վասպուրականի ու Տարսուսի գաւառները, առանց տարիքի ու սեռի խտրութեան մորթեցին ծերերն, երիտասարդներն ու կաթնկեր երեխաները, Մանազկերտի սահմանի վրայ գտնուող և Վասպուրականին պատկանող Արտիշ (Ականց) և Ալճավազ (Արծկէ) գաւառներու կոտորածներուն նախելու ըլլանք, Վանի նահանգի մէջ հայ չեն թողուցեր, հայ խաղաղ բնակչութենէն մօտաւորապէս 20,000 հայ մորթեր են:

Ապրիլ 28-ին գրաւուեցաւ Մանազկերտի գաւառակը ուսական յաղթական բանակի կողմանէ, բայց առանց դիմադրութեան այդ գրաւումը, շատ սուղ նստաւ մեր հայ ազգաբնակչութեան վրայ, թուրք-քիւրդ մուկոտներու թեան այլ ևս չափն անցած էր, իբրև թէ հայերը գրաւած ըլլային զայն (Մանազկերտ), քրդական հրոսակախումբերը մէկ կողմանէ, իսլամ գաղթականներու խուժանն ալ միւս կողմանէ յարձակեցան մեր դրացի Բուլանըզի Խլաթի (Բընուռիք) և Խնուսի գաւառակներու հայաբնակ գիւղերու վրայ ու սկսան անպթար մորթել ու յօշոտել հայ մշակն իր սիրական հողէն ու ջրէն, կաթնկեր մանուկն ալ իր գրկէն ու ստինքէն Վերի Բուլանըզի հայերը միայն ազատուած են, գիշեր ատեն փախչելով ոուս բանակի գրաւած վայրերու սահմանները, Վարի Բուլանըզի 13 հայ գիւղերու աւելի քան 2000 ընտանիքներէն, Խլաթի 22 հայ գիւղերու 4500 տուն—ընտանիքներէն և Խնուսի Գարաչոպան, Գովանտուկ, Սալորիկ և Գրմխայեայ գիւղերու 4000 անձերէն, ծմակներու ու ծերպերու մէջէն գաղտազողի փախչելով՝ հազիւ թէ 150 հոգի եկեր, բերեր են սև լուրեր ու սև խապրիկներ մեր արիւնոտ եղբայրներէն ու բզքտուած քոյրերէն, փախչողներու պատմութեան նայելով Բաղէշ, Կարին, Մշոյ քաղաքն ու Մշոյ Դաշտն ալ սուրէ անցուցեր են, բայց քանակն ու չափն չգիտցուիր, իսկ մեր և Անթապ (Տութաղ) գաւառակներու ցանուցրիւ սպանուածներու թիւը 1000-ի կը մօտենայ: Վիճակագրութիւնը յետոյ կը զրկեմ:

Ողորմելի վիճակի մը մէջ կը գտնուին նաև գաւառիս սահ-

մաններու մէջ ապաստանող 40,000 անձ զաղթականները, զրկուած իրենց բնավայրերէն մերկ, սովալըլուկ ասդին կը զարկուին, անդին կը զարկուին:

Ուստի հաղորդելով զայսոսիկ Ձերդ վհնափառութեան ի զիտութիւն, հայ ազգի անունով կը խնդրեմ, ուր որ անկ է շնորհ բերէք ներկայացնել ողբալի հայ ժողովրդեան վիճակն և խնդրէք Ամենաողորմած Չարի կառավարութիւնը, որ ուշադրութիւն դարձնունեն այս բազմաչարչար ժողովրդեան պէտքերու ու ցաւերու վրայ, տրուի հրաման բանակին յառաջ խաղալու գէպի հայաշատ Տարօն, որքան որ կոտորածները խոշոր համեմատութիւններ չեն ստացեր, մինչև որ համաշխարհային արիւնհոռուշտ պատերազմ վերջ գտնէ և կարգապահութիւն ու խաղաղութիւն վերահաստատուի:

Համբուրելով Ձեր Օծեալ ս. աջը

Մնամ խոնարհ որդիդ

ստաջնորդական փոխանորդ Մանազկերտի

Յովհաննէս Բահաճայ Տ. Աւետիսեանց.

